

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



ԵՐԵՎԱՆ
2019

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ ՏԱՐԵԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ – 2018թ.



Սույն իրավական գեկույցը ստեղծվել է «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ: Ձեկույցի բովանդակության համար պատասխանատու է «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի տեսակետները:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտ հասկացություններ/ հապավումներ.....	4
Ընդհանուր նկարագիր	6
Համագործակցություն և հանդիպումներ.....	8
Համագործակցություն և հանդիպումներ	9
Դեպքեր.....	10
Իրավիճակը քրեկատարողական հիմնարկներում	32
Լուծման ուղիներ.....	33

ԱՆՐԱԺԵՇՏ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՍԿԳԻ	Սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն
ԼԳԲՏ, ԼԳԲՏԻ, ԼԳԲՏ+	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և գենդերային այլ ինքնություն, սեռական այլ կողմնորոշում ունեցող անձինք
SUS	Տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդ
ԿՍԿ	Կանանց հետ սեռական հարաբերություն ունեցող կին
Տրանսգենդեր	Մարդ, ում հոգեւոյնայական սեռը չի համընկնում ծննդյան պահին վերագրված սեռին:
Տրանսսեքսուալ	Մարդ, որը գտնվում է կամ ձգտում է մշտապես ներկայանալ հակառակ սեռի կերպարում և մշտապես աշխատում է գենդերային արտահայտումը համապատասխանեցնել գենդերային ինքնությանը:
Հագուստափոխ	Մարդ, ով կրում է հակառակ սեռի հագուստ կամ կերպար՝ սեփական նախասիրություններից, ցանկություններից և ընկալումներից ելնելով: Հագուստափոխ մարդիկ ոչ միշտ են լինում տրանսգենդեր անձինք և կարող են ունենալ տարբեր գենդերային ինքնություններ:
Հոմոսեքսուալ (նույնսեռական)	Մարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձանց նկատմամբ:
Ինտերսեքս	Մարդ, որը ծնվում է արական և իգական ներքին կամ արտաքին օրգանների, քրոմոսոմների համակցություններով:
Բիսեքսուալ (երկսեռական)	Մարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի երկու գենդերների անձանց նկատմամբ:
Հետերոսեքսուալ (տարասեռական)	Մարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի հակառակ սեռի անձանց նկատմամբ:
ԹՆՕ	Թմրամիջոց ներարկային օգտագործողներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն



ԱՆ	Արդարադատության նախարարություն/ Առողջապահության նախարարություն
ՉՏԿ	Չբաղվածության տարածքային կենտրոն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՉԼՍ	Չանգվածային լրատվության միջոց
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկ
ԴՀ	Դատապարտյալների հիվանդանոց
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՆՍՀԿ	«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին՝ նպաստելու հասարակության մարդկանց իրավունքների և շահերի պաշտպանությանը, տրամադրելու նյութական և ոչ նյութական աջակցություն ֆիզիկական և իրավաբանական անձանց և իրականացնելու հասարակական տարբեր արդյունավետ նախաձեռնություններ, այդ թվում՝ աջակցել Եվրոպայում անվտանգության և համագործակցության գծով Հելսինկյան համաձայնագրի 1975թ-ի եզրափակիչ ակտի և ՄԱԿ-ի կողմից 1948թ-ին ընդունված Մարդու իրավունքների Համընդհանուր Հռչակագրի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի, Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի, տնտեսական սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի իրականացմանը և դրանց շրջանակներում ընդունված միջազգային համաձայնագրերի, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից այլ միջազգային իրավական ակտերով ստանձնած պարտավորությունների կատարմանը: Կազմակերպությունն ունի հստակ կառուցվածք, գործողությունների շրջանակ և ռազմավարություն:

ՆՍՀԿ-ն 2018թ-ին տրամադրել է 407 անվճար խորհրդատվություններ և փաստաբանական ծառայություններ իր շահառուների շրջանում՝ քաղաքացիական, քրեական և վարչական ոլորտներում, մասնավորապես հետևյալի վերաբերյալ՝

Անձնագրի փոխանակման հիմքերն ու տրամադրելու կարգը,

Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմքերը,

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը,

Դատական ակտերի հարկադիր կատարման գործառույթները,

Պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերն ու անվճարունակության հատկանիշները,

ՄԻԱՎ/ԶԻԱՀ ունեցող անձանց արդյունավետ բուժման ապահովումը,

Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները,

Սեռական կողմնորոշման և գեներային ինքնության հիմքով խտրականության և ատելության կոչերի դեպքում հնարավոր իրավական պաշտպանությունը,


Քրեական գործի հարուցումը,

Տուժողի իրավունքները և պարտականությունները,

Կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի իրավունքները և պարտականությունները:

2018թ.-ին իրավաբանական բաժնում ծառայություններ են մատուցել իրավունքի տարբեր ճյուղերում մասնագիտացված իրավաբաններ ու փաստաբաններ, որոնք «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության աջակցությամբ պարբերաբար անցել են վերապատրաստման դասընթացներ և ծանոթացել միջազգային փորձին:

2018թ.-ի ընթացքում ՆԱՅԿ-ի կողմից մշակվել են հետևյալ իրավական ակտերի նախագծերը՝



2018թ.-ի ընթացքում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության և բռնության ենթարկված 13 անձանց տրամադրել է փաստաբանական անվճար ծառայություն, ներառյալ մինչդատական և դատական փուլերում ներկայացուցչությունը: Նշված անձանց առնչվող քրեական գործերը տվյալ պահին գտնվում են նախաքննության և դատաքննության փուլերում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

«Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության իրավաբան/փաստաբանները, որոնց թիվը 6 է, ունեցել են մի շարք տեղական և միջազգային հանդիպումներ և ձեռք են բերել նոր համագործակցության համաձայնություններ:

Նրանք բազմիցս հանդես են եկել որպես փորձագետներ և անցկացրել դասընթացներ, նախատեսված՝

- 1. **Զբաղվածության տարածքային կենտրոնների ներկայացուցիչների**
- 2. **ՀՀ Նախարարությունների ներկայացուցիչների**
- 3. **Տեղական ինքնակառավարման մարմինների**
- 4. **Չանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների**
- 5. **Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների**
- 6. **Առողջապահական ոլորտի աշխատակիցների**
- 7. **Հասարակական Կազմակերպությունների ներկայացուցիչների**
- 8. **ԼԳԲՏ անձանց համար**

2018թ.-ի ընթացքում նրանք մասնակցել են իրավական նշանակության միջազգային այնպիսի հանդիպումների, ինչպիսիք են՝

- 2018թ.-ի նոյեմբերի 28, Երևան- «Խտրականության դեպքերի փաստագրում» 2018թ. Չեկոսլովակիայում,
- 2018թ.-ի հոկտեմբերի 17-24, Գերմանիա- Համագործակցության հուշագրի կնքում Հայաստանի և Գերմանիայի երիտասարդների փորձի փախանակման և վերապատրաստման վերաբերյալ,
- 2018թ.-ի սեպտեմբերի 23-28, Չեխիա- «Խտրականության դեպքերի իրավիճակային դիտարկում» աշխատանքային հանդիպում,



- 2018թ.-ի օգոստոսի 28-30, Ղրղզստան- Իրավական գրագրության դասընթաց,
- 2018թ.-ի հունիսի 22-26, Երևան- «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության և Բավարիայի շրջանի երիտասարդական խորհրդի աշխատակազմերի փորձի փոխանակում, ծանոթացում Հայաստանի երիտասարդների հիմնահանդիսներին,
- 2018թ.-ի հունիսի 28-29, Երևան- «Ինչպե՞ս գտնել ուղին» երկօրյա աշխատանքային հանդիպում,
- 2018թ.-ի հունիսի 22, Երևան- Կյոթ-սեդան քննարկում՝ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության, խտրականության դրսևորումների, դրանց դեմ ուղղված իրավապաշտպան գործունեության և առողջության պահպանման վերաբերյալ:

ԴԵՊԵՐ

Սույն բաժնում ներկայացված են 2018թ.-ի ընթացքում ՆԱՅԿ-ի կողմից տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների և փաստաբանական ծառայությունների առավել հատկանշական դեպքերից մի քանիսը:

Դեպք № 1



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն 2018թ.-ի օգոստոսի 18-ին քաղաքացի Մ.Տ.-ից ստացել է տեղեկատվություն այն մասին, որ նույն օրը առավոտյան ժամը 5:00-ի սահմաններում, **Երևան քաղաքի Բեյրութ փողոցի մոտակայքում 6 տրանս անձանց է մոտեցել զինված երիտասարդ և սպառնացել վերջիններիս կյանքին և առողջությանը վնաս պատճառել:** Տվյալ անձինք վախենալով փախել են դեպի Երևանի Շիրակ հյուրանոց, ներս մտել և թաքնվել: Չինված երիտասարդը հետևել է նրանց: Արդյունքում հյուրանոցի աշխատակիցները տրանս անձանց դուրս են հանել հյուրանոցից: Նրանք դիմել են ՀՀ Երևանի Կենտրոնի ոստիկանության բաժին և ներկայացրել իրավիճակը: Նրանց են մոտեցել նաև այլ երկու տրանս անձինք, որոնք վիճաբանության մեջ են մտել ոստիկանության մոտակայքում գտնվող անձանոթ տղամարդու, ապա նաև ոստիկանների հետ: Քաջքուկի արդյունքում վնասվածքներ են ստացել ոչ միայն ՀՀ ոստիկանության աշխատակիցները, այլև տրանս անձինք: Հարուցվել է քրեական գործ: Տրանս անձինք Ժ.Հ.-ն և Մ. Կ.-ն գործում ներգրավվել են որպես մեղադրյալներ:

ՀՀ Ոստիկանությունը միջադեպի մասին նյութ էր տեղադրել իր պաշտոնական կայքում՝ խախտելով Ժ.Հ.-ի անմեղության կանխավարկածը:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և Հայաստանի ՄԻՊ գրասենյակի համագործակցության արդյունքում ՀՀ Ոստիկանության պաշտոնական էջից հեռացվել է «Առաջին հայացքից կանայք, սակայն իրականում աղջկա զգեստներով տղամարդիկ ու

նրանց համախոհները ներխուժեցին ոստիկանության բաժին» վերտառությամբ տեսանյութը, որը հրապարակվել էր մի խումբ անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի և անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտմամբ:

Ժ.Հ.-ն Կենտրոնի ոստիկանության բաժնում աշխատակիցների կողմից ենթարկվել է խոշտանգման: Տրանս անձ Ժ. Հ.-ի նկատմամբ քրեական գործ էր հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 դրվագի համար:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից գործում ներգրավվել են փաստաբաններ Արա Ղարազյոզյանը և Անահիտ Մկրտչյանը:

Ստորև ներկայացվում է քրեական գործի վերաբերյալ տեղեկատվություն.

2018թ.-ի հոկտեմբերի 15-ին Ժ.Յ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը երկարացվել է ևս 2 ամսով: Փաստաբանը Նուբարաշեն ԶԿՅ-ում տեսակցելով Ժ.Յ.-ի հետ, նրանից վերցրել է իրեն Կենտրոնի ոստիկանության բաժնում խոշտանգման ենթարկելու վերաբերյալ դիմում և հանցագործության մասին հաղորդում ներկայացրել ՅՅ հատուկ քննչական ծառայություն: Դատարանը որոշում է կայացրել, խոշտանգման փաստով դիմել դատախազություն, քանի որ կալանքի նիստի ժամանակ բարձրաձայնվել է այդ մասին:

2018թ.-ի հոկտեմբերի 24-ին փաստաբանը հատուկ քննչական ծառայության քննիչի հետ այցելել է ՅՅ Նուբարաշեն ԶԿՅ, որտեղ քննիչը Ժ.Յ.-ից բացատրություն և հաղորդում է ընդունել հանցագործության մասին:

2018թ.-ի նոյեմբերի 5-ին Յատուկ քննչական ծառայության կողմից Ժ.Յ.-ն ճանաչվել է տուժող՝ իրեն ոստիկանության Կենտրոնի բաժնում ծեծի ենթարկելու գործով: Յարուցվել է քրեական գործ՝ ՅՅ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, այն է խոշտանգում, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից: Ժ.Յ.-ն հարցաքննվել է որպես տուժող:

2018թ.-ի նոյեմբերի 27-ին Ժ.Յ.-ի հետ ՅՅ ԱՆ Նուբարաշեն ԶԿՅ-ում կատարված քննչական գործողությունից հետո քրեական գործով նախաքննության ավարտ է հայտարարվել:

2018թ.-ի դեկտեմբերի 3-ին Ժ. Յ.-ի խոշտանգման գործով տեղի է ունեցել ոստիկանների և Ժ.Յ.-ի առերեսումը: Սակայն որևէ կերպ խոշտանգման փաստը չի հիմնավորվում: Ժ.Յ.-ի մատնանշած անձինք հերքում են, որ ոստիկանները Ժ.Յ.-ին ծեծել են, հերքում են նաև ոստիկանները:

Տվյալ պահին քրեական գործի նախաքննությունն ավարտվել է, գործն ուղարկվել է դատական քննության: Դատարանը խափանման միջոց կալանքը վերահաստատել է, որի դեմ կներկայացվի վերաքննիչ բողոք:

Գործով 2 մեղադրյալների կողմից պաշտպանների կողմից ներկայացվել է արագացված դատաքննության կարգ կիրառելու մասին միջնորդություն, որը դատարանի կողմից բավարարվել է:

2019թ.-ի փետրվարի 18-ին փաստաբան Արա Ղարազյոզյանը իր պաշտպանական ճառով ներկայացրեց իր պաշտպանյալի արարքում հանցակազմի բացակայության վերաբերյալ հիմնավորումներ, որի հիման վրա դատարանը որոշում կայացրեց չկիրառել արագացված դատաքննության կարգ և սկսել գործով դատաքննություն:

Տվյալ գործով դատավորն էր Մեսրոպ Երջանիկի Մակյանը, իսկ մեղադրողը՝ Ս. Պողոսյանը:

Դեպք № 2

Տրանս անձ Է. Ա.-ի սեռական ծառայություններից օգտվելու նպատակով նրա բնակարան այցելած անձն այրել է բնակարանն ու հեռացել: Է. Ա.-ն ստացել է ծանր մարմնական վնասվածքներ և այրվածքներ:

Է. Ա.-ն հրաժարվել է իր նախկին փաստաբանից և դիմել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՅԿ:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՅԿ-ի կողմից գործում ներգրավվել է փաստաբան Արա Ղարազյոզյանը:

Փաստաբանը ծանոթացել է Է. Ա.-ի դատաբժշկական փորձաքննության եզրակացությանը. եզրակացության հետևության մասում նշված է եղել, որ **Է. Ա.-ն ստացել է ծանր մարմնական վնասվածքներ:**

- 2018թ.-ի հուլիսի 3-ին փաստաբանը Է. Ա.-ի հետ Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում, ծանոթացել է տուժողի վերաբերյալ նշանակված փորձաքննության եզրակացության հետ, որը կապված է տուժողի բջջային հեռախոսի վնասման հետ: Նշակակվել է դատաապրանքագիտական փորձաքննություն: Եզրակացության համաձայն IPone 7 բջջային հեռախոսը ենթակա չէ օգտագործման և վնասի արժեքը կազմում է 235.000 (երկու հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:
- 2018թ.-ի հոկտեմբերի 18-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան Է. Ա.-ի քրեական գործով ներկայացվել է հայցադիմում հանցագործության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման մասին: Գումարի չափը սահմանվել է 690.000 (վեց հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:
- 2018թ.-ի հոկտեմբերի 22-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը քննության առավ տուժող Է. Ա.-ի գործը: Ամբաստանյալի պաշտպանի կողմից միջնորդություն ներկայացվեց դռնփակ դատական նիստ անցկացնելու մասին: Դատարանը բավարարեց միջնորդությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննվելու են կողմերի սեռական անձեռնմխելիության հարցերը:
- 2018թ.-ի նոյեմբերի 21-ին ուղարկվել է Է. Ա.-ի քրեական գործի կյուրթերը:
- Գործը գտնվում է դատաքննության փուլում: Նշանակվել է դատահոգեբուժական փորձաքննություն:
- Տվյալ գործով դատավորն էր Մարինե Մելքոնյանը, իսկ մեղադրողը՝ Ս. Պողոսյանը:

Դեպք № 3

Դեռևս 2017թ.-ին Ս.Պ.-ի նկատմամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 258 –րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով.

Խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով՝ որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ:

Վերջինս՝ որպես կալանավոր, գտնվում է Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում: 2018թ.-ի մայիսի 14-ին **որպես Նուբարաշեն ԹԿՅ-ում պահման պայմանների և սխալ նախաքննության նկատմամբ բողոքի նշան, Ս. Պ.-ն թուրք է ներարկել ոտքի մեջ, կուլ տվել պտուտակ, գդալ: Վերջինս շուրջ 2 (երկու) շաբաթ ԹԿՅ-ում մատնված է եղել անուշադրության և չի ստացել անհրաժեշտ բժշկական օգնություն:** Ս.Պ.-ն ահազանգել է ՆՍՀԿ՝ օգնություն տրամադրելու խնդրանքով:



- 2018թ.-ի մայիսի 14-ին ՆՍՀԿ նախագահ/իրավապաշտպան Սերգեյ Գաբրիելյանը, իրավաբան Անահիտ Մկրտչյանը և առավել խոցելի խմբերի հարցերով համակարգող/իրավապաշտպան Արման Սահակյանը՝ օգտագործելով Արդարադատության նախարարության կողմից իրենց տրված վկայականները, որպես դիտորդ մուտք են գործել ՀՀ ԱՆ Նուբարաշեն ԶԿՀ, որտեղ տեսակցել են Ս.Պ.-ին: Տեսնելով նրա արնաքամ և ծանր վիճակը շտապ հորդորել են «Նուբարաշեն» ԶԿՀ պետին կալանավորին տեղափոխել ՀՀ ԱՆ Դատապարտյալների հիվանդանոց: ԶԿՀ-ն կատարել է պահանջը և Ս.Պ.-ին տեղափոխել ՀՀ ԱՆ Դատապարտյալների հիվանդանոց:
- 2018թ.-ի հունիսի 4-ին ՆՍՀԿ ներկայացվել այն մասին, որ Ս.Պ.-ին և Ա. Ս.-ին «Նուբարաշեն» ԶԿՀ-ի աշխատակիցները պարբերաբար նվաստացրել են իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով: Ս.Պ.-ի մայրը տեսակցելու նպատակով այցելել է «Նուբարաշեն» ԶԿՀ, երբ «Նուբարաշեն» ԶԿՀ աշխատակիցը մոր և այլ անձանց մոտ հայտնել է, որ տղան համասեռամոլների խցում է: Վերջիններս ինքնասպանության փորձ են կատարել: Փաստաբան Արա Ղարազյոզյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ԶԿՀ-ի հետաքննիչ Լ.Ղազարյանի որոշման դեմ:
- Նա պատասխանել է՝ ներարկելով թուրք ոտքերի մեջ: Հետաքննիչը կյուրեր է նախապատրաստել և մերժել ինքնասպանության հասցնելու դեպքով քրեական գործի հարուցումը:
- 2018թ.-ի հունիսի 4-ին բողոք է ներկայացվել Գլխավոր դատախազին հետաքննիչի որոշման դեմ խնդրելով վերացնել որոշումը և հարուցել քրեական գործ:
- Բողոքը մերժվել է Գլխավոր դատախազի կողմից: Գլխավոր դատախազի որոշումը բողոքարկվել է դատարան: Դատարանի կողմից միջնորդությունը բավարարվել է: Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանների դատախազության կողմից բերվել է վերաքննիչ բողոք:
- Տվյալ գործով դատավորն էր Մեսրոպ Երջանիկի Մակյանը:

Դեպք № 4

2018թ.-ի հունիսի 3-ին փաստաբանական ծառայություններից օգտվելու նպատակով ՆՍՀԿ է դիմել Կ.Յ.-ն: **Վերջինս սոցիալական կայքերից մեկով զրուցել է ոմն Ս.Պ.-ի հետ, որի ընթացքում ուղարկել է իր մերկ լուսանկարները: Ս.Պ.-ն շուտով սկսել է սպառնալիքներ հնչեցնել այն մասին, որ կիրապարակի Կ.Յ.-ի մերկ լուսանկարները, եթե վերջինս նրան չփոխանցի 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով գումար:**

Գործում ՆՍՀԿ-ի կողմից ներգրավվել է փաստաբան Արա Ղարազյոզյանը: Ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում ՀՀ Ոստիկանություն, որի հիման վրա հարուցվել է քրեական գործ՝ շորթման հատկանիշներով:

- 2018թ.-ի հունիսի 4-ին Արարատի և Վայոց Ձորի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվել է տուժող Կ.Յ.-ի վերաբերյալ քրեական գործը՝ շորթում կատարելու մեղադրանքով: Գործով հարցաքննվել են երեք վկաներ: Ամբաստանյալը մեղքն ընդունել է:
- 2018թ.-ի հունվարի 22-ին Կ.Յ.-ի վերաբերյալ քրեական գործով այցելություն է կատարվել Արարատի մարզային վարչություն շորթման գործով քննչական

գործողության նպատակով: Նոր ներգրավված քննիչը, կրկին հարցաքննել է տուժողին և մեղադրյալի և տուժողի ֆեյսբուքյան գրառումների վերաբերյալ զնության արձանագրություն է կազմել: Ընթացիկ ժամանակահատվածում մեղադրյալը կատարել է ևս երկու նոր հանցագործություն, որոնց առթիվ նույնպես քրեական գործ է հարուցվել:

- 2018թ.-ի հունվարի 30-ին Կ.Յ.-ի վերաբերյալ քրեական գործով փաստաբանը այցելել է Արտաշատի քննչական բաժին, որտեղ քննիչը նախաքննության ավարտ է հայտարարել և ծանոթացրել քրեական գործի նյութերին:
- 2018թ.-ի փետրվարի 8-ին Կ.Յ.-ի վերաբերյալ քրեական գործով փաստաբանը միջնորդություն է ներկայացրել Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան, որ Datalexs.am կայքում տեղադրված քրեական գործի տվյալները փակվեն, քանի որ այն հասանելի է ցանկացած անձի, իսկ դա կարող է հանգեցնել տուժող Կ.Յ.-ի գենդերային ինքնության բացահայտմանը:
- 2018թ.-ի փետրվարի 14-ին Datalexs.am կայքում տեղադրված քրեական գործի տվյալները փակելու վերաբերյալ միջնորդությունը Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը բավարարվել է և Datalexs.am կայքում տեղադրված քրեական գործի տվյալներն ամբողջությամբ փակվել են:
- 2018թ.-ի նոյեմբերի 21-ին ուղարկվել են Կ. Յ.-ի վերաբերյալ քրեական գործի նյութերը:
- Դատարանը կայացրել է մեղադրական դատավճիռ, և ամբաստանյալ Ս.Ա.-ին ճանաչել մեղավոր ՅՅ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1-րդ կետով նախատեսված հանցանք կատարելու մեջ և նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:
- Ամբաստանյալ Ս.Ա.-ի նկատմամբ կիրառվել է համաներում:

Տվյալ գործով դատավորն էր Գրիգոր Վոլոդյայի Յովհաննիսյանը, իսկ մեղադրողը՝ Յ. Դավթյանը:

Դեպք № 5

Ա.Յ.-ի ծնողները իմացել են նրա սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին, ինչի պատճառով բարկացած վիճակում պատռել են Ա.Յ.-ի փաստաթղթերը՝ զինվորական գրքույկ, կենսաչափական անձնագիր, ծննդյան վկայական, ինչպես նաև տանից դուրս են հանել: Ա.Յ.-ն դիմել է ՆՍՀԿ ստանալու համար իրավաբանական խորհրդատվություն և վերականգնելու նշված փաստաթղթերը:

- 2018թ.-ի մայիսի 14-ին ՆՍՀԿ իրավաբան Անահիտ Մկրտչյանը տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն նշված փաստաթղթերը վերականգնելու ընթացակարգի վերաբերյալ:
- 2018թ.-ի մայիսի 15-ին իրավաբանի կողմից զինվորական գրքույկը վերականգնելու նպատակով կազմվել է դիմում, ուղղված ՅՅ ՊՆ «Շահումյան» տարածքի զինվորական կոմիսարիատի ԺՊ փոխգնդապետ Գուրգեն Գրիգորյանին, որը հետագայում բավարարվել է:

Դեպք № 6

Տրանսգենդեր կանայք՝ Ա.Ա.-ն, Ս.Պ.-ն և Ա.Ս.-ն գտնվել են Երևան քաղաքի Չաքյան փողոցում, երբ Ա.Չ.-ն իր սև գույնի BMW մակնիշի ավտոմեքենայով կանգ է առել

Նրանց մոտ: Ուղևորի նստատեղում գտնվող Ռ.Յ.-ն լուսանկարել է տրանսգենդեր կանայք Ա.Ա.-ին, Ս.Պ.-ին և Ա.Ս.-ին: Վերջիններս հորդորել են չնկարել իրենց, սակայն Ռ.Յ.-ն շարունակել է լուսանկարել: Այնուհետև Ռ.Յ.-ն հայիոյել է մեղադրյալներին, որոնք ի պատասխան նույնպես հայիոյել են: Ա. Չ.-ն դուրս է եկել ավտոմեքենայից և հարվածել Ս.Պ.-ին, հարձակվել Ա.Ս.-ի վրա և փորձել խեղդել: Ավտոմեքենայի մեջ գտնվող Ռ.Յ.-ն վարել է ավտոմեքենան և նրանք հեռացել են դեպքի վայրից: Դեպքի վայր են եկել ոստիկանության աշխատակիցները: Ա.Չ.-ն ոստիկաններին ցույց է տվել տրանս անձանց, որոնց նկատմամբ 2017թ.-ի սեպտեմբերի 22-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 258 –րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով:

1. *Խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով՝ որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ:*

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն սույն գործով որպես մեղադրյալների պաշտպաններ ներգրավել է փաստաբան Արա Ղարազյոզյանին և Հայկ Հայրապետյանին:

- Մեղադրյալների նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակներում քննիչը միջնորդություն է ներկայացրել խափանման միջոց կալանքը կիրառելու մասին: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2017թ.-ի հոկտեմբերի 7-ին բավարարել է միջնորդությունը:
- ՆՍՀԿ փաստաբաններ Արա Ղարազյոզյանի և Հայկ Հայրապետյանի կողմից ներկայացվել են վերաքննիչ բողոքներ, որոնց արդյունքում Ա.Ա.-ի մասով կիրառված կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը բեկանվել է և փոխարինվել գրավով: Գրավի չափ է սահմանվել 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը: Մյուսների նկատմամբ ընտրված որոշումները մնացել են ուժի մեջ:
- Կալանքների ժամկետի ավարտից հետո ՆՍՀԿ փաստաբան Արա Ղարազյոզյանը դիմել է ՀՀ Վերաքննիչ դատարան Ա.Ա.-ի և Ս.Պ.-ի կալանքների ժամկետների երկարաձգման միջնորդության մերժման և խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու մասին որոշում կայացնելու համար, սակայն դատարանը մերժել է միջնորդությունը:
- Այնուհետև տեղի են ունեցել առերեսումներ ՆՍՀԿ փաստաբաններ Արա Ղարազյոզյանի և Հայկ Հայրապետյանի իրավական ուղեկցմամբ՝ մեղադրյալների, տուժողների ու վկաների միջև:
- Կալանքների ժամկետների երկարաձգման մասին միջնորդություն ներկայացնելուց հետո Երևան քաղաքի Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը բավարարել է միջնորդությունները ժամկետները երկարաձգելու մասին: ՆՍՀԿ փաստաբան Արա Ղարազյոզյանը բողոքարկել է դատարանի որոշումները ՀՀ Վերաքննիչ դատարան, այնուհետև վճռաբեկ և ՄԻԵԴ:
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից գրանցվել և համարակալվել է Ա.Ս.-ի վերաբերյալ բողոքը, որում մատնանշված է ՄԻԵԿ 5-րդ հոդվածի խախտում:

- 2018թ.-ի մարտ ամսին մեղադրյալներ Ս.Պ.-ն և Ա.Ս.-ն գտնվելով Նուբարաշեն ԶԿՅ-ում թուք ներարկելու միջոցով ինքնասպանության փորձ են կատարել: Դեպքի վերաբերյալ փաստաբան Արա Ղարազյոզյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ ասելության հիմքով անձին ինքնասպանության հասցնելու մասին:
- 2018թ.-ի դեկտեմբերի 11-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է փաստաբան Արա Ղարազյոզյանի կողմից ներկայացված միջնորդությունը՝ Ս.Պ.-ի նկատմամբ կիրառելով գրավ 5.000.000(հինգ միլիոն) ՀՀ դրամ գրավ: Շուրջ մեկ տարի վեց ամիս Ս.Պ.-ն գտնվում էր կալանքի տակ: Ս.Պ.-ն մեղադրվում էր ՀՀ քր.օրի 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ խուլիգանություն, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ:

Տվյալ գործով դատավորն էր Հովհիկ Մանուկյանը, իսկ մեղադրողը՝ Ռ. Մանուկյանը:

Դեպք № 7

Վ.Ս.-ն, ով հանդիսանում է բիսեքսուալ տղամարդ, 2017թ.-ի հունիսի 5-ին, ժամը 01:30-ի սահմաններում Հանրապետության Հրապարակի մոտակայքում ծանոթացել է անհայտ անձի հետ: Այնուհետև, **նրանց միջև տեղի է ունեցել սեռական հարաբերություն, որը զուգորդվել է սեքսուալ բնույթի բռնի գործողություններով: Բռնություն գործադրող անձը Վ.Ս.-ի հետ համատեղ անցկացրած ժամանակի ընթացքում, պատմել է նրան իր մասին, զանգելու նպատակով խնդրել հեռախոսը և փորձել է տուժողի մոտ վստահություն ձեռք բերել: Նույն օրը, ժամը 05:00-ի մոտակայքում Նար-Դոս Աղյուսագործների խաչմերուկի մոտակա տարածքում, ոչ մարդաշատ վայրում տվյալ անհայտ անձը բռնություն է կիրառել Վ.Ս.-ի նկատմամբ: Բռնության ժամանակ անհայտ անձը դաժանաբար քարով հարվածներ է հասցրել Վ.Ս.-ի գլխին, մեջքին և կոնքերին: Բռնությունից հետո, նախնական տվյալներով բռնություն գործադրող անձը հափշտակել է Վ.Ս.-ի բջջային հեռախոսը:**

Տուժողը օգնություն հայցելու նպատակով դիմել է հարևաններին, սակայն վերջիններս սպառնացել են բռնությամբ և պահանջել հեռանալ:

2017թ.-ի հունիսի 5-ին, վաղ առավոտյան Տուժողը դիմել է ՆՍՀԿ օգնություն ստանալու խնդրանքով: Կազմակերպությունն անհապաղ արձագանքել է խնդրանքին և օգնություն հայցողին տրամադրել իրավաբանական աջակցություն:

- ՆՍՀԿ փաստաբան Հայկ Հայրապետյանը դիմումատու Վ.Ս.-ին տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն, մասնավորապես այն մասին, որ վերջինս իրավունք ունի դիմել քննչական կոմիտե՝ հանցագործության կատարման մասին հաղորդում տալու համար, իսկ իրեն հասցված գույքային վնասի մասով քաղաքացիական հայց ներկայացնել՝ հատուցում ստանալու համար:
- Պարզաբանումից հետո Վ.Ս.-ն՝ ՆՍՀԿ փաստաբան Հայկ Հայրապետյանի հետ՝ 2017թ.-ի հունիսի 5-ին ներկայացել է Էրեբունի ոստիկանության բաժին, որտեղ հայտնել են կատարված իրադարձության մասին:
- 2017թ.-ի հունիսի 6-ին Վ.Ս.-ն դիմել է հետաքննիչի որոշման հիման վրա դատաբժշկական փորձաքննություն անցնելու և իրեն պատճառված վնասը զնահատելու համար:

- ՆՍՀԿ փաստաբան Արա Ղարազյոզյանը ստանձնելով տուժողի իրավունքների պաշպանությունը ներկայացրել է դիմում՝ քրեական գործի հարուցման մասին որոշումը ստանալու համար:
- Վ.Մ.-ն ճանաչվել է գործով տուժող: Փաստաբանի միջնորդությունից հետո տուժողի հեռախոսը գտնվել է, սակայն հանցագործություն կատարած անձը չի բացահայտվել և ձերբակալվել:
- ՆՍՀԿ փաստաբան Արա Ղարազյոզյանի կողմից միջնորդություն է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին՝ կասեցման որոշումը վերացնելու պահանջով:
- Վ.Մ.-ի առողջությանը պատճառված վնասի գործով նախաքննությունը շարունակվում է և կատարվում են անհրաժեշտ քննչական գործողություններ:

Գործը գտնվում է նախաքննության փուլում: Հանցանք կատարած անձը դեռ չի հայտնաբերվել:

Դեպք № 8

Մ.Տ.-ն հանդիսանում է տրանս կին: Վերջինս 2016թ.-ի դեկտեմբերի 2-ին գտնվելով «Կովկաս Պանդոկ» ռեստորանային համալիրի մոտ, ոստիկանների կողմից ենթարկվել է բռնության, մասնավորապես, ոստիկաններից մեկը ոտքով հարվածել է Տուժողի դեմքին՝ պատճառելով նրան ֆիզիկական ցավ: Անձը դիմել է ոստիկանություն՝ իր իրավունքների պաշպանության համար, սակայն ոստիկանությունը նրա նկատմամբ ցուցաբերել է անհանդուրժողական վերաբերմունք և անգործություն:

Մ.Տ.-ն փաստաբանական ծառայություններից օգտվելու նպատակով դիմել է ՆՍՀԿ: Գործում ներգրավվել է փաստաբան Արա Ղարազյոզյանը:

- 2016թ.-ի դեկտեմբերի 8-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում Մ.Տ.-ն փաստաբան Արա Ղարազյոզյանի հետ միասին մասնակցել է դատավարական գործողությանը: Վերջինս հետաքննիչի մոտ գրավոր բացատրություն է ներկայացրել ոստիկանների կողմից իրեն բռնության ենթարկելու դեպքի վերաբերյալ:
- Ավարտելով բացատրությունը, նույն բաժնում տուժող Մ.Տ.-ն ՆՍՀԿ փաստաբան Արա Ղարազյոզյանի հետ միասին հաղորդում է ներկայացրել հանցագործության մասին:
- Մ. Տ.-ի հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազի կողմից 2016թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ x քրեական գործը և ուղարկվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:
- 2016թ.-ի դեկտեմբերի 16-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերով քննիչ Դոխոյանը որոշում է կայացրել Մ.Տ.-ին տուժող ճանաչելու մասին:
- 2017թ.-ի հունվարի 13-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում Մ.Տ.-ի հետ միասին ՆՍՀԿ փաստաբան Արա Ղարազյոզյանը մասնակցել է տուժողի հարցաքննությանը: Որպես տուժող Մ.Տ.-ն մանրամասն ցուցմունք է տվել դեպքի վերաբերյալ: Փաստաբան Արա Ղարազյոզյանի ուղղորդմամբ իր ցուցմունքում նշել է, որ ոստիկանները իրեն ծեծի են ենթարկել և ազատությունից ապօրինի զրկել իր սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության պատճառով:

- 2017թ.-ի մարտի 1-ին Մ.Տ.-ն մասնակցել է առերեսմանը, որի արդյունքում ճանաչել է իրեն բռնության ենթարկած ոստիկաններին: Ոստիկանները հաստատել են այն փաստը, որ բերման են ենթարկել անձին, սակայն հերքեցին, որ բռնություն են գործադրել նրա նկատմամբ:
- Քննիչը որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը կարճելու մասին: Սույն որոշումը բողոքարկվել է ՆԱՅԿ-ի փաստաբանի կողմից՝ դատախազին: Դատախազը նույնպես մերժել է փաստաբանի բողոքը: Դատախազի որոշումը բողոքարկվել է Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Դատարանը մերժել է պաշպանի բողոքը: Դատարանի որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարան:
- 2018թ.-ի փետրվարի 22-ին Մ. Տ.-ի գործը վերաքննիչ քրեական դատարանում մակագրվել է դատավոր Դանիելյանին, սակայն դատավորի վատառողջ լինելու պատճառով գործը փոխանցվել և մակագրվել է դատավոր Սահակյանին:
- 2018թ.-ի հունիսի 11-ին փաստաբան Արա Ղարազյոզյանը Մ. Տ.-ի գործով ներակայացրել է վճռաբեկ բողոք՝ քրեական գործի վարույթը կարճելու վարույթը իրականացնող մարմնի, առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ քրեական դատարանի որոշումների դեմ:
- 2018թ.-ի նոյեմբերի 1-ին վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել Մ. Տ.-ի գործով Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին:
- 6 ամսվա ընթացքում փաստաբանի կողմից Վճռաբեկ դատարանի որոշումը կբողոքարկվի ՄԻԵԴ:

Տվյալ գործով դատավորն էր Մարինա Մելքոնյանը, իսկ դատախազը՝ Դոխոյանը:

Դեպք № 9

2018թ.-ի ապրիլի 11-ին ՀՀ Երևան քաղաքի ոստիկանները բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժին Բ.Կ.-ին՝ առանց մեկնաբանելու, թե ի՞նչ արարքի կատարման մեջ է վերջինս կասկածվում: Առգրավվել է Բ.Կ-ի հեռախոսը, վզնոցը, գոտին:

Մաշտոցի բաժնում Բ.Կ.-ին ծեծել են, խոշտանգել, որպեսզի նա ընդունի իր մեղքը իրեն մեղսագրվող արարքում գողություն: Շահառուին չի ներկայացվել, թե ինչ դատավարական կարգավիճակ ունի նա:

Բ.Կ.-ն 2018թ.-ի ապրիլի 12-ին դիմել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ՝ իրավաբանական խորհրդատվություն ստանալու նպատակով:

- «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ում տուժող Բ.Կ.-ին իրավաբանական խորհրդատվություն է տրամադրել իրավաբան Անահիտ Մկրտչյանը:
- Այնուհետև գործում ներգրավվել է փաստաբան Արա Ղարազյոզյանը:
- Արա Ղարազյոզյանը բանավոր հարցում է ուղղել ՄԻՊ-ին՝ պարզելու համար Բ.Կ.-ի դատավարական կարգավիճակը:
- ՄԻՊ-ից տեղեկացրեցին, որ Բ.Կ.-ն քրեական գործում ներգրավված է որպես կասկածյալ:

Դատավարական գործողությունների արդյունքում քրեական գործը կարճվել է:

Դեպք № 10

Գ.Թ.-ն և Յ. Ս.-ն ակտիվորեն մասնակցել են 2018թ.-ի ապրիլյան Թավշյա հեղափոխության հավաքներին: Նշված օրերին վերջիններս տուժել են ոստիկանների կիրառած հատուկ միջոցներից:

Տուժողներ Գ. Թ.-ն և Յ. Ս.-ն դիմել են «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ փաստաբանական ծառայություններից օգտվելու նպատակով:

Գործում ներգրավվել է փաստաբան Արա Ղարազյոզյանը:

- 2018թ.-ի օգոստոսի 30-ին փաստաբանը Հատուկ քննչական ծառայությունում մասնակցել է տուժողի հարցաքննությանը ոստիկանների կողմից հատուկ միջոց կիրառելու դեպքով: Գ. Թ.-ն սույն գործով ճանաչվել է տուժող:
- 2018թ.-ի հոկտեմբերի 22-ին Գ. Թ.-ի և Յ. Ս.-ի գործերով «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի հետ համատեղ խմբային բողոք է ներկայացվել Մարդու իրավունքների Եվրոպական դատարան՝ խոշտանգման դեպքի ոչ արդյունավետ քննության հիմքով:

Գործը գտնվում է Հատուկ քննչական ծառայության վարույթում:

Դեպք № 11

2018թ.-ի ապրիլի 15-ին երեկոյան ժամը 02:30-ի սահմանում իր վարձակալած բնակարանում դանակահարվել է տրանսգենդեր կին Կ.Կ.-ն: Վերջինս համացանցի միջոցով ծանոթացած տղամարդու հետ ձեռք է բերել հանդիպման պայմանավորվածություն: Անծանոթ անձը չարաշահելով Կ.Կ.-ի վստահությունը, մուտք է գործել նրա բնակարան, սրճել, զրուցել այնուհետև ունեցել սեռական հարաբերություն: Վախենալով այն մտքից, որ ինչ-որ մեկը կարող է իմանալ նրա և տրանսգենդեր կնոջ սեռական հարաբերության մասին, անծանոթը փորձել է ձեռքազատվել Կ.Կ.-ից: Երբ տուժող Կ.Կ.-ն շրջվել է թիկունքով դեպի անծանոթը, վերջինս քաշել է նրա մազերից և դանակով հարվածել պարանոցին: Դանակը մխրճվել է Կ.Կ.-ի կոկորդը: Անծանոթ անձը հեռացել է տանից, իր հետ վերցնելով տրանսգենդեր կնոջը պատկանող հեռախոսը (Iphone 7), Mitsubishi մակնիշի ավտոմեքենայի բանալիները և տղամարդու բաճկոնը: Տրանսգենդեր կին Կ.Կ.-ն դանակահարող անձի հեռանալուց հետո, գրեթե ուժասպառ վիճակում, հանել է դանակը կոկորդից և սողալով հասել մինչև հարևանի դուռը: Հարևանները շտապ արձագանքել են, զանգահարել Շտապ օգնության ծառայություն և օգնել վիրավորին մինչև բժիշկների մոտենալը: Կ.Կ.-ն տեղափոխվել է Էրեբունի բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունք, որտեղ էլ առավոտյան ժամը 06:20-ի սահմանում ենթարկվել է վիրահատության: Բժշկական միջամտություն ցուցաբերելու դիմաց բժիշկները Կ.Կ.-ին ուղեկցող անձանցից պահանջել են մոտ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ: Տուժողի ընկերները դիմել են «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ: Կազմակերպությունն անմիջապես քայլեր է ձեռնարկել դիմելով ՀՀ Առողջապահության նախարարություն, ապա նաև Էրեբունի բժշկական կենտրոն, ներկայացնելով բավարար փաստարկներ՝ բժշկական օգնությունն անվճար տրամադրելու: Միջամտության արդյունքում Տուժողին բժշկական օգնությունն ամբողջությամբ տրամադրվել է անվճար:

- «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից տրանսգենդեր կին Կ.Կ.-ին տրամադրվել է փաստաբան:
- Հարուցվել է քրեական գործ:

Քրեական գործը կարճվել է մեղադրյալի ինքնասպանություն գործելու փաստով:

Դեպք № 12

2018թ.-ի նոյեմբերի 2-ին Հայաստանի Աղվերան-Երևան ճանապարհահատվածի ողջ երկայնքով 2 ավտոմեքենա հետապնդել են այն ավտոմեքենային, որում գտնվել են կազմակերպության աշխատակիցները: Աշխատակիցները ֆիքսել են իրենց հետապնդող մեքենաների համարանիշներն ու դրանցում գտնվող անձանց ինքնությունները: Նույն օրը հետապնդող անձանցից Սևան Աղաջանյանը իր ֆեյսբուքյան էջում կատարել է հետևյալ գրառումը.

«Մեր տեղեկություններով արդեն մի քանի մասնակից արտերկրից Հայաստանում են և մասնակցելու են LQPS ֆորումին, այս պահին մենք հետևում ենք նրանց»:

- «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կատարվածը դիտարկելով որպես հանցագործություն, հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնում:
- Նույն օրը ՀՀ ոստիկանության աշխատակիցները բացատրություն են վերցրել Կազմակերպության աշխատակիցներից դեքի վերաբերյալ:
- Ի պատասխան «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի 02.11.2018թ.-ի դիմումի՝ Սևան Աղաջանյանի և իր համախոհների կողմից Կազմակերպության աշխատակիցներին հետապնդելու վերաբերյալ, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժինը պատասխանել է՝
- «Հայտնվում է, որ Ձեր 02.11.2018թ.-ի դիմումը հասցեագրված ոստիկանության Կենտրոնական բաժին, ստացվել և ուսումնասիրվել է:

Հայտնվում է, որ Ձեր դիմումով նշված փաստերի ուսումնասիրության արդյունքում իրավախախտման կամ հանցագործության հատկանիշներ չեն հայտնաբերվել: Միաժամանակ հայտնվում է, որ քաղ. Սևան Աղաջանյանի հետ անցկացվել է պրոֆիլակտիկ բնույթի զրույց՝ հորդորվել է պահպանել համակեցության կանոնները և զերծ մնալ իրավախախտումներից»:

Դեպք № 13

2018թ.-ի դեկտեմբերի 23-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ է դիմել տրանս գենդեր կին Յ.Դ.-ն, նշելով որ «Ժամանակակից վիրաբուժության կլինիկա»-ն՝ CMS-ը նրանից քթի պլաստիկ վիրահատություն կատարելու համար պահանջել է տրանսսեքսուալության մասին տեղեկանք:

- ՆՍՀԿ Իրավաբան Անահիտ Մկրտչյանը կապ է հաստատել «Ժամանակակից վիրաբուժության կլինիկա»-ի տնօրենի, ապա նաև ՀՀ Առողջապահության նախարարության համապատասխան աշխատակցի հետ:
- Վերջիններս նշել են, որ տրանսսեքսուալության մասին տեղեկանքի անհրաժեշտություն չկա, անհրաժեշտ է ներկայացնել միայն հոգեկան վիճակի մասին հոգեբույժի կամ հոգեբանի կողմից տրված եզրակացություն: Նմանատիպ տեղեկանքի ներկայացման անհրաժեշտություն առաջացել է այն բանից հետո, երբ Յ.Դ.-ն բժշկական կենտրոնում նշել է, որ ժամանակին ընդունել է որոշ հորմոնային և հոգեմետ դեղորայք:

- Իրավահարաբերության երկու կողմերի հետ էլ պայմանները հստակեցվել են և մեկնաբանվել նրանց իրավունքներն ու պարտականությունները, որից հետո վիրահատությունն անցկացվել է առանց խոչընդոտների:

Դեպք № 14



